Զգայական սենյակ Սևանի համար

Նպատակը

To equip the Sevan Children's Rehabilitation Center with a sensory room to enhance therapy for children with special needs, addressing the growing demand for innovative, free, and accessible care in the Gegharkunik region.

Նկարագրություն

Սևանի մանկական վերականգնողական կենտրոնը կենսական դեր է խաղում Գեղարքունիքի մարզի առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաների համար՝ սպասարկելով շահառուների ինչպես Սևան քաղաքից, այնպես էլ 11 հարակից գյուղերից և շրջակա բնակավայրերից: Պետական վերահսկողության ներքո գործող կենտրոնում աշխատում է ինը հմուտ թերապևտ՝ վերականգնող բժշիկ մասնագետի ղեկավարությամբ: Բոլոր թերապևտիկ ծառայություններն անվճար են՝ պետական աջակցության շնորհիվ:

Ամեն տարի կենտրոնը սպասարկում է հաշմանդամություն ունեցող շուրջ 200 երեխայի, որոնց մեծ մասը սոցիալապես անապահով ընտանիքներից են: Սակայն կարիքը զգալիորեն գերազանցում է հնարավորությունները. մարզում ավելի քան 300 երեխա կենտրոնի ծառայությունների կարիքն ունի, և սպասողների ցուցակը շարունակում է երկարել՝ նոր դեպքերի հայտնաբերման հետ մեկտեղ:

Բուժվող երեխաների մեծ մասն ունեն աուտիզմ և շարժողական խանգարումներ: Առավել արդյունավետ խնամք ապահովելու համար թերապևտները մասնակցում են շարունակական մասնագիտականզարգացման դասընթացների և ակտիվորեն կիրառում նորարարական մոտեցումներ:

Նման նորարարություններից մեկը, որը դեռևս չի ներդրվել, զգայական սենյակն է՝ վերափոխող, բազմազգայական միջավայր, որը նախատեսված է զգայարանները խթանելու և կարգավորելու համար: Լույսի, ձայնի, գույնի, հպման, հոտի և շարժման՝ տեղին օգտագործման միջոցով զգայական սենյակն աջակցում է երեխաների հուզական կարգավորմանը, ճանաչողության զարգացմանը և շարժողական հմտություններին՝ նրանց առանձնահատուկ կարիքներին համապատասխան հանգիստ և գրավիչ միջավայրում:

Վերականգնողական կենտրոնն զգայական սենյակի համար տարածք է հատկացրել, նրանց ընդամենը մեր օգնությունն է պետք՝ այն կահավորելու համար անհրաժեշտ սարքավորումները գնելու գործում:

Բյուջե

Սարքավորման տեսակը	Մեկ միավորի արժեքը	Քանակը	Ընդհանուր արժեքը
Գնդակների հավաքածու	1,000	4	4,000
Մերսող գնդակների հավաքածու	2,000	2	4,000
Զգայական գորգ	25,000	2	50,000
Ճոճաթոռ	25,000	1	25,000
Մինի բարձրախոս	10,000	1	10,000
Ադամանդե լապտեր	20,000	1	20,000
Գունավոր կոներ	6,000	5	30,000
Զգայական գնդակ	2,500	10	25,000
Հավասարակշռող կանաչ բլոկ	2,600	10	26,000
Թունել	12,000	1	12,000
Փազլ գորգ	20,000	5	100,000
Զգայական պատ	75,000	1	75,000
Լուսային թունել	240,000	1	240,000
Օպտիկամանրաթելային մոդուլ	540,000	1	540,000
Հավասարակշռության մոդուլ	120,000	1	120,000

Ընդհանուր

Փոխարժեք՝ *1* ԱՄՆ դոլար = *383* ՀՀ դրամ

֏1,363,000